կենդանացուցեր՝ և կերակրես սգալեաւ և իմանալեաւ. գոյացուցեր և ճոխացուցեր՝ և ստամբակելոյն* և բռնաւորին՝ քաղցրութեամբ սաստեցեր՝ արձակելով ի կապոյն, և ստորատեղեալ ի բանդի, և ընդվզեալ ստրկացն վրիժախնդիր լինէին. սակայն ոչ սպառեալ սիրոյն տալով տապ և խոնաւ և արդիւն, զի բաւականասցի պիտոյիւքն՝ որոց հաւասարեաց զանգիտեալ պատրաստն. և ոչ մոռացար զցաւ ծնաւղին, վասն որո յանձանձէիր երևեալ և խաւսեալ, տալ և առնուլ, պատրաստել և պատժել, ընտրել և խոտել, մինչև ի լրումն ամանակին որ եկեր զհետ փախուցելոյն մոլորելոյն և կորուսելոյն: Եւ բուռն հարեր ըզզարմէ նախնոյն իմոյ, զղամբար լուցեր՝ և աւել ածեր և գտեր զքոյ նկատեալ պատկերն, և զմոլորեալ դրաչն, եդեալ ի վերա կենսաբեր ուսոյտ՝ ածելով ի փարախն և ի շտեմարանն: Հետևեցար ընդ շաւեղս մեր և կրեցեր զմերն՝ բայց յաղտից և ի մեղաց: Կրեցար յարդանդի՝ որ կրես զարարածս, յղացար ի Հոգւոյն՝ ստեղծիչդ ամենայնի, ծնար ի՝կնոջէ՝ կազմողդ զկինն ի կողէ, և ի կուսէ՝ ի վեր քան զբան: Կերակրեցար կաթնասուն՝ կերակրիչդ կերողաց, հրոյ պարանաւ ձգեցեր զարքայսն յերկրպա-

---

*. Լուս. «ապստամբ»: